



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

19289

1910



# ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ուսմանց Ծրագիր

ԴՊՐՈՅԱՍԵՐ

ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



2010

37
Դ-82

Կ. ԳՈԼԻՍ  
ՏՊՐՈՅԱՍԵՐԻՆ Յ. ՄԱՏՔՈՍԵԱՆ

1910

2001

37  
7-82

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՒ ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԱՍԽԵՐ

## ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հաստատեալ 1 Մայիս 1879

և

Վերահաստատեալ 1909 Մեպտեմբեր 1

ԸՆԴ ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ

ՎԵՀԱՓԱԾ Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ. ԿՈԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆՍ. ՀԱՅՈՒԹ

ՆԱԽԱԳԱԾՈՒԹ ԵԱՄԲ

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՋԻ Ա. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐք ՀԱՅՈՒ ԹՈՒՐՔԻՈՅ

ՆՊԱՏԱԿ

Հիմնել Պոլսոյ մէջ աղջկանց վարժապետանոց մը՝  
հայաբնակ գաւառներու վարժուհի պատրաստելու  
անօգնական Հայութեաց դաստիարակութեան  
նպաստելու համար:

Կ. ՊՈԼԻԱ  
ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ՅԱ ՄԱՍՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ՅԱ ՄԱՍՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

7/11. 1922

Ա. ԱՅԱՍԻՒՐԱՆ ԱՆԴՐԱ

Ա. ԱՅԱՍԻՒՐԱՆ ԱՆԴՐԱ

## ԿՈՆԴԱԿ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

---

**ՄԱ.ՏԹ.ԷՌՈ ՇԱ.Ռ.Ա.Ց ՅԻՍՈՒՄԾ ՎՐԵՄԾՈՄԻ**  
**Եւ անհասանելի կամօքն Աստծոյ Եպիսկոպոսա-**  
**պիտ Եւ Կարողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն**  
**Պատրիարք համազգական նախամեծար Արքոյ Ա-**  
**րարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ Մրգոյ**  
**Կարողիկէ Էջմիածնի Ազնուափայլ Տիկին Եփիմեա Աւե-**  
**տիւեան՝ Ատենապետի Ընդհանուր Ժողովոյ Ընկերութեան Դպրոցա-**  
**մէր կանանց, որ Կ. Պոլիս, և շնորհափայլ անդամութեաց նոյն ըն-**  
**կերութեան, հողեհարազատ դստերց Մայր Աթոռոյս բազմացի ող-**  
**շոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ:**

Բերկրութեամբ սրտի և միմիթարութեամբ հոգւոյ ընկալար  
 զղիր ընկերութեանդ, գտողեան ի 4 ամսեանս Հոկտեմբերի, որով  
 շնորհաւորէ զօդումն մեր ի հայրապետ համայն ազգիս և զոյց ընդ  
 նպմին զեկուցանէ զվիճակէ նորաբաց վարժարանիդ Եւ զաշակեր-  
 տութեացդ. Դստերք հողեհարազատը, բազածանօթ եմք անձնուէր  
 և սրտեռանդն վաստակոց և բեղմաւոր չանից անդամութեաց Ըն-  
 կերութեանդ, որոց բաջ ըմպանեալ զմեծ կարեւորութիւն ուսման և  
 զիտութեան մերազնեայ մատաղատի աղջկանց, բոլորով սրտիւ և սի-  
 րայօժար կամօքն նուիրեալ է զմնձինս ի յարատեւութիւն և ի պահ-  
 պանութիւն յարկի կրթութեանդ: Եւ կամովին բառնալով զնանրու-  
 թիւն նորին, զուն զործէք աննկուն ոգուով յառաջ վարել զործ խը-  
 նամածութեան և ուսման մեծի հաստատութեանդ: Աներկրայ եմք,  
 եթէ բարեպաշտօն ժողովուրդ Հայոց, որոց չերմ է սիրան Եւ վառ  
 զգացմունքն առ զպրոց, ոչ անխայեացէ ի լումայն իւր արկանել ի  
 գանձանակ յանկապտելի և աստար հանդիսանալ լստ ամենայնի  
 յարկի կրթութեանդ սրով և Թեմեւացուցանել զբեռն ընկերութեանդ:

757-57

Արդ՝ այսու հայրապետական կոնդակ՝ ու մերով յայտնելով առ  
ի մէնչ սիրեցեալ հոգեհարազար գտաբրց զիաշուրմն զոհունակու-  
թիւն մեր և զիայրականն օրնութիւնն վասն սրտաբուխ զդացմանց  
և շնորհաւորութեանդ, մաղթեմք յԱմենակալիք տորածանել զամե-  
նակարող հովանին ի վերայ օրինեալ յարկիդ պարզեւելով ամենե-  
ցունդ կար և կարողութիւն համբերատար ոգւով և նոյն եռանդեամբ  
շարունակել զկատարումն ծանրատար պարտուցդ, յոր կոչեցեալըդ  
էք Փրկիչն Յիսուս վարձահատուց լիից ամենեցունդ յաղազ ան-  
դոււ վաստակոց Զերոց պարգեւելով զջնորհս մատաղերամ ման-  
կըտցեացդ:

Ողջ Երոււր, զօրացեալ ի խնամս Երկնաւոր Հօր և Օրհնեալ  
ի մէնչ Ամէնս:

ՄԱՍԹԵՈՍ Բ. ԿԱԹԿՍ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

23 Հոկտեմբերի 1909 ամի  
եւ ըստ տոմարիս ՌՅՅԹ.  
ի Հայրապետութեան մերում Ա. ամի  
յԱրարատեան Մայր Արոռ. Ս. Էջմիածնի  
ի Վաղարշապատ



## ԿՈՆԴԱԿ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ԵՎԼԻՇԵ ԾԱՌԱԾ ՅԻՍՈՒՏՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ  
ողորմութեամբ Ա. ԱՍՏՈՒՃՈՅ Հօր եւ Ենորիիւ Ս. Հոգույն  
եւ կամօֆ Ա. զգին Արքեպիկոպոս Կոստանդնուպոլ-  
սոյ եւ Պատրիարք Հայոց Թուրքիոյ. Աղնուուի և ժրա-  
շան Տիկնանց Դպրոցակը Ողջոյն և Օրհնութիւնն:

Զեր օգտաշատ Ընկերութեան վերակազմութիւնն մեծ զոհու-  
նակութիւն պատճառեց մեզ, և Ազգային Կեղրոնական Վարչութիւնը  
Ուսումնական Խորհրդոյ հեա համամտօքն զնահատելով անոր նը-  
պատակին կարեւորութիւնը, վաւերաց ինչ ինչ փոփոխութեամբ Ըն-  
կերութեանդ Կանոնագիրը, զոր ժրապատ և ներկայած էիք 1909  
նոկտեմբեր 29 Թուականաւ Զեր զրութեամբ:

Կէտ նպատակի ընտրած էք Զեզ մեր աղջկանց կրթութիւնն  
և զայն ապահովելու համար կը նիմէնք վարժարաէ մը, ո՛ւր վար-  
ժութիւններ պիտի պատրաստուին, մեր զաւատական դպրոցներու հա-  
մար Զեր այս ժրագիրը կը պարտնակէ զաստիարակութեան հիմնա-  
կան սկզբունք մը: Աղջկինք դաստիարակել կ'ենթագրէ մայրութիւնը  
բարձրացնել, և զնել զայն իր Ընկերային պաշտօնի բուն դիրքի մէջ: Մայրեն են որ իրենց անդիմագրելի զօրութեամբ, զոր ունին ման-  
կութեան վրայ, կը կազմեն տղոց նկարագիրը, բարոյական ներքին  
մարդը, և մայրեր պէտք են ազգին, որբան լուսամիտ, նոյնը բան  
առարինի և զգօն. որ կրթեն նորամիլ սերունդը, ներշնչեն անոր  
պարտաւորութեան զգացումը, Քրիստոնէական սէրը, Եղայրակցու-  
թեան հոգին, բարոյականի սկզբունքները, և գուք սոյն մեծ զօրու-  
թիւնը կուզէք լուսաւորել, աղնուացընել և անոր միշոցան մեր դաս-  
տիարակութեան դըրութեան մէջ ներմուծել ա՛յն մեծ բորբշրջումը,  
զոր բազարակիթ աշխարհն ընդունեց շատոնց և օգտուեցաւ լիովին:

Մեծ զոհութեամբ կը տեսնենք որ, զուք գպրոցակը Տիկնացը,  
տարիներէ ի վեր յարած էք այս մեծ զաղափարն, և այն ինչ դաշ-  
րած բռնապետութեան խորշակն, որ յառաջդիմութեան ամէն նո-  
րածիլ բողբոջներ կը ցամբեցնէ, և որ երբեմն Զեր օգտակար ձեռ-  
նարկին ալ մատնեց ամկութեան, կ'անդրադառնար այդ մեծ զաղա-

փարին և կ'սկսիք Զեր ընդհատոսմ զործը շարունակել խոր համոցումով և բուռն խանդով, Զեր Ընկերութեան նպատակն վեհութիւնն, Զեր յարատեւութեան ողին, Զեր յանձնառած զոհովութիւններն պատիւ կը բերեն Զեր առաջադրութեանց և զգացումներուն կը շնորհաւորենք զԶեր Վաստի ենք որ չէք անտեսած նուև Թէ այդպիսի հաստատութիւն մը, որ վարժուհիներ պիտի պատրաստէ, կը կարօվի ուսմանց շատ լուրջ ծրագրի մը, անոր խղճամիտ զործադրութեանը՝ ուսուցչունեաց ընտրելիներու կատարեալ յարմարութեան, իմացական կարողութեան և բարոյական հանգամանց տեսակետով, բանի որ անոնց ձեռք պիտի յանձնուի սերունդներ դաստիարակող ուրիշ կարգ մը մեծ ուսուցիչներու կրթութիւնն, և այսպիսի կրթութիւն մը պէտք է անթերի լինի, համուճան մանաւանդ մեր տոհմային վիճակի պահանջմանց Անշուշտ այս պարագային մէջ Ուսումնական Խորհրդոյ հետ համախորհուրդ կը սահմանէք բուրոյ կարեւոր կարգադրութիւններն և զմել եւս պատրաստ պիտի գտնէք 'ի հարկին օժանդակելու Զեր Կրնաք վստահ լինել որ այն նպատակաւ որով բոլորանուէր ձեռնարկած էք կրթական սոյն կարեւոր աշխատութեան, պիտի գտնէք ամենուսաւ բարոյական ու կրթական ամեն օժանդակութիւնն, և Զեր արդիւնքներով պիտի թողուք մեր ազգային զարգացման տարեգրութեանց մէջ անուն մը արժանի օրհնութեան և պասակի:

ի Պատրիարքարանի Հայոց  
13 Փետրվար 1910

Մնամք Աղօքարաց  
ԵՊ.ԻՆ. ՍՐԲԱԶԱՆ ԴՈՒՐԵԱՆ

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւնը, որու նպատակն է հայարձնակ գաւառներու վարժուհի պատրաստել եւ անօգնական հայուհեաց դաստիարակութեան նպաստել, հաստատուած է 1879ին, նախաձեռնութեամբ Օրթագիլի Ա. Հոփիսիմեան վարժարանի մի քանի շրջանաւարտներուն (Օրդք. Նորիկ Սիմօնեան, Թագուհի Ղ. Պալզազարեան, Արմաւենի Սահակեան այժմ Տիկ. Մինասեան). ասոնց հրաւէրին փուլթով պատասխանեցին բաւական թուով օրիորդներ, այսպէսով իրենց ընկերակիցներու մէջ միութեան կապ մը ստեղծելու գունակութիւնն ալ վայելեցին:

Ընկերութեանս նպատակը՝ առաջին տարիին իսկ, ուսումնական անձնաւորութեանց գնահատութեան եւ համակրութեան արժանացաւ. ասկից ընկերութիւնը քաջալերուած՝ անմիջապէս բացաւ իր վարժարանը Օրթագիլի մէջ, նախապէս իսստ համեստ պայմաններու ներքեւ:

Առաջին շրջանաւարտները տուաւ ազգին 1885ին, ասոնք թուով երեք էին, որոնց երկուքը Վանեցի՝ գացին պաշտօնավարել իրենց հայրենիքը: Երկու շրջանաւարտ տուաւ 1886ին, իսկ 88էն վերջ հետզհետէ իր շրջանաւարտներու թիւը բազմացաւ:

Ընկերութիւնը կարող եղաւ ստուարացնել իր անդամակիցներուն եւ բաժանորդներուն թիւը, շը-նորհիւ Օրթագիւղի, Բերայի եւ Կէտիք-Փաշայի գործօն անդամուհիներուն, որոնք գիւղէ գիւղ, թաղէ թաղ շրջելով փոքրագումար լումաներ ի մի ձուկեցին ու վարժարանին դիրքը հետզհետէ բարձրացուցին, այնպէս որ սանուհիները իբրև ուսուցչուհի սկսան պայմանագրուիլ գաւառաց Վարչութիւններուն եւ Միացեալ Ընկերութեան կողմէ. շրջանաւարտ ըլ-լալնէն՝ առաջ, ինչ որ մեծ գրաւական մ'էր Դպրոցասէրի սանուհեաց յաջողութեան եւ վայելած համակրութեան:

Վարժարանը 79 — 88 Օրթագիւղի մէջ 10 տարուան շրջան մը բոլորելէն յետոյ՝ յարմար դատուեցաւ զայն Գում-Գաբու փոխադրել, թէ նոյն թաղի ուսումնասէր ժողովուրդին փափաքը գոհացընելու եւ թէ աւելի ընդարձակ սահմանի մէջ ազգին ծառայած ըլլալու փափաքով:

Այս Բ. շրջանին վարժարանը ունեցաւ մինչեւ 30 գիշերօթիկ, ձրի, պաշտպանեալ եւ թոշակաւոր հայաբնակ այլ եւ այլ գաւառներէ, իսկ ցերեկեայ՝ մինչեւ 102, նոյնպէս ձրի եւ թոշակաւոր, որոնք ոչ թէ արտաքին շպարով, այլ հաստատ սկզբունքներով եւ տոհմային ընտիր դաստիարակութեամբ օժտուած պատուարեր անդամուհիներն եղան Հայ ընկերութեան ամէն դասակարգերուն:

Արդ Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւնը 31 տպրուան գոյութիւն մ'է, միայն հին ոէժիմի հետեանքով 13 տալիուան դադար մ'ունեցած է: Իր նախորդ 18 տարուան շրջանին մէջ վայելած է օրուան Պատրիարքներու, նշանաւոր Եկեղեցական եւ աշխարհական անձնաւորութեանց բարձր համարումը եւ քաջալերութիւնը:

Իր նպատակին կատարելապէս ծառայած ըլլալուն գոհունակութիւնը ունի, որովհետեւ կարճ ժամանակամիջոցի մէջ ազգին տուած է բաւական թուով վարժուհիներ որոնք չեն վարանած երթալ պաշտօնավարել այնպիսի հեռաւոր հայաբնակ գաւառներու մէջ, ուր ճամբորդելը այրերու համար իսկ յանդգնութիւն կը համարովի: Եղած են թէեւ ասոնց մէկ քանիներ, որոնք իրենց 5 տարուան պայմանաժամէն կանուխ թողած են ուսուցչութեան ասպարէզը, սակայն անոնց փոխան եղան բաւական վարժուհիներ, որոնք պայմանեալ ժամանակին կրկինը եւ եռապատիկը պաշտօնավարեցին եւ ցարդ 14 վարժարաններ կը շարունակեն պաշտօնավարել թէ Պոլսոյ եւ թէ հայաբնակ գաւառներու մէջ:

Ընկերութիւնս իւր գոյութիւնը եւ յաջողութիւնը կը պարտի իր հիմնադիրներուն, նախագահներուն պատոյ անդամներուն, եւ գործօն անդամուհիներուն, որոնցմէ պարտ կը համարի յիշատակել միայն անոնք՝ որոնց կորուստը մեծ ցաւ մ'է այսօր:

Յարգանաց յիշատակի արժանի են՝ նախ հանգուցեալ Գաբրիէլ էֆ. Ներշապուհ որ առաջին թելադրիչը եղած է սոյն ընկերութեան հաստատման, նոյնպէս բարեյիշատակ էլիհաս էֆ. Զայեան որ յղացած է ընկերութեանս ընդունած նպատակը, նոյնպէս յաւէտ անմոռաց ազգասէր Պատրիարք Ներսէս Վարժապետեան, Տիկ. Նազլը Վահան, Տիկ. Սրբուհի Տիւսար, Տիկ. Զապէլ Ֆրնտրգլեան, Տիկ. Մաննիկ Պիպէոճեան, Տիկ. Հեղինէ Օգոստինոսեան, Տիկ. Արաքսիս Կիւլպէնկեան, Տիկ. Սաթենիկ Մսերեան, Օր. Վերոն Մէրհամէթճեան, Օր. Բուրով Ֆասովլեան եւ Օր. Բարիս Կոստանդ որոնք բարոյապէս եւ նիւթապէս մեծ աշխատութիւն նուիրած են ընկերութեանս բարգաւաճման:

Սյսօր վերահաստատուած Դպրոցասէր Տիկ-նանց ընկերութեան հիմնադիր-անդամուհիք, ուսումնասէր գործօն Տիկնայք եւ նախկին շրջանաւարտք իր վարժարանին՝ ձեռք ձեռքի տուած, պարտք համարած են ի Գում-Գաբու վերաբացուած վարժարանը հասցնել այնպիսի մակարդակի մը որ համապատասխանէ այժմու ընկերական պահան-ջումբեռուն ու կարենայ լեցնել ազգին պէտքերէն մին, այն է վարժուհի պատրաստել հայրենակ գա-ւառներու վարժարանաց համար:

## ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

### ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ

#### Ն Պ Ս Ա Կ

Յօդ. 1. Հիմնել Պոլսոյ մէջ աղջկանց վարժա-պետանոց մը՝ հայարնակ գաւառներու վարժուհի պատրաստելու համար, նաև անօգնական հայուհ-եաց դաստիարակութեան նպաստել :

#### ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 2. Ընկերութեան անդամ են իր հիմնա-դիրները, նոր ընտրուած անդամուհիները և իր չըր-ջանաւարտուհիները :

Յօդ. 3. Նոր ընկերուհիի մը անդամակցու-թեան առաջարկը կ'ըլլայ անդամուհիներէ մէկուն միջոցաւ. առաջարկող անդամուհին պարտի իր ներ-կայացուցած անձին վրայ հարկ եղած տեղեկու-թիւնները տալ :

Յօդ. 4. Անդամուհիներու բաժնեգինն է ամ-սական մէկ դահեկան :

Յօդ. 5. Ամէն անդամուհի հաւասար ձայն ունի ժողովոյ մէջ, քանի բաժնեգին ալ ըլլայ վճարածը :

Յօդ. 6. Ընկերութիւնս կ'ունենայ նաև երկ-սեռ նուիրատու անդամներ :

**Յօդ. 7.** Բաժանորդ Անդամ կ'ըսուին անոնք որ բաժնեգին մը կը վճարեն և նոյն ատեն կը մասնակցին ընկերութեան վարչական գործերուն, Նուիրատու Անդամ կ'ըսուին ամէն անոնք, որոնք միայն ամսական կամ տարեկան որոշ նուէր մը կուտան ընկերութեան, իսկ Պատւոյ Անդամ կը կոչուին անոնք, որ ընկերութեան կուտան իրենց բարոյական և նիւթական աշակցութիւնը:

**Յօդ. 8.** Ամէն նուիրատու անդամուհի կրնայ Ընդդ. ժողովներուն ներկայ ըլլալ, միայն քուէտալու իրաւունք չունի:

**Յօդ. 9.** Դպրոցասէրի ամէն շրջանաւարտուհի, որ 20 տարին լրացուցած է՝ անդամակցութեան իրաւունք ունի:

**Յօդ. 10.** Ամէն անդամուհիի բարոյական պարտականութիւնն է անձնուիրաբար աշխատիւ ընկերութեան օգտին:

#### ԿԱԶՄԱՆԵՐՊՈԽԹԻՒՆ

**Յօդ. 11.** Ընկերութիւնն կը կառավարուի երկու ժողովներով. Ա. Հիմնադիր ժողով, Բ. Տնօրին կորհուրդ:

**Յօդ. 12.** Ընկերութիւնն կրնայ նաև մասնաձիւղեր ունենալ գաւառներու մէջ:

#### ՃԻՄԱՆԱԳԻՐ ԺՈՂՈՎ

**Յօդ. 13.** Ընկերութեանն Հիմնադիր ժողովը օրէնսդիր և համարատու մարմինն է:

**Յօդ. 14.** Հիմնադիր ժողով կը գումարուի ամիսը մէկ անդամ:

**Յօդ. 15.** Հիմնադիր ժողով կը գումարուի նաև՝ ըստ 8րդ. յօդուածի Ազգ. Ընկերութեանց կազմական կանոնագրի՝ երբ Հիմնադիր ժողովի Դիւանը, կամ Տնօրին կորհուրդը և կամ ընկերութիւններու  $\frac{1}{3}$  մասը հարկ տեսնէ:

**Յօդ. 16.** Հիմնադիր ժողովի նիստերը օրինական կը նկատուին երբ անդամուհիներու մեծամասնութիւնը ներկայ է: Բայց ակայ ընկերուհի մը իրաւունք չունի բողոքելու Հիմնադիր ժողովի տուած որոշումներու դէմ:

**Յօդ. 17.** Հիմնադիր ժողովը գաղտնի քսէարշութեամբ կ'ընարէ իր Դիւանը և Տնօրին ժողով մը:

**Յօդ. 18.** Հիմնադիր ժողովին Դիւանին պաշտօնը երկամեայ է եւ վերընտրելի:

**Յօդ. 19.** Հիմնադիր ժողովի անդամուհիները կրնան այցելել ուսումնարանը. բայց իրենց դիտութիւնները պէտք է բերեն ուղղակի Տնօրին կորհուրդոյ, գրաւոր կերպով:

#### ՏՆՕՐԻՆ ԽՈՐՃՈՒՐԴ

**Յօդ. 20.** Ընկերութեան վարչութիւնը յանձնուած է ինն (9) անդամուհիներէ բաղկացած Տնօրին կորհուրդոյ մը՝ հաւաքաբար պատասխանատու Հիմնադիր ժողովին:

**Յօդ. 21.** Տնօրին կորհուրդը ընկերութեանս նպատակի մասին նոր ձեռնարկի մը սկսելէ առաջ պարտի Հիմնադիր ժողովի հաւանութիւնը ստանալ:

**Յօդ. 22.** Տնօրին կորհուրդը ստիպողական պարագաներու մէջ կրնայ աղատաբար գործել, պատասխանատութիւնը իր վրայ առնելով, և յա-

ռաջիկայ գումարելի Հիմնադիր Ժողովին մէջ պարտի գործին ստիպողութեան վրայ բացատրութիւն տալու:

Յօդ. 23. Տնօրէն Խորհուրդը կընայ նաև Հիմնադիր Ժիւանին հետ խորհրդակցութեամբ կարեւոր և ստիպողական գործի մ'որոշում տալ և ըստ այնմ գործել:

Յօդ. 24. Տնօրէն Խորհուրդը ամիսը անգամ մը իր գործառնութիւններուն մասին բացատրութիւններ կրուտայ Հիմնադիր Ժողովին և տարին անգամ մ'ալ իր միամեայ մատակարարութեան և գործառնութեան մանրամասն հաշիւը կը ներկայացնէ Հիմնադիր Ժողովի վաւերացման:

Յօդ. 25. Տնօրէն Խորհուրդը կ'ընտրէ վարժարանին Տնօրէնուհին և Ռւսուցչական մարմինը, և պատասխանատու է վարժարանին Ա. Ռւսումնական, Բ. Բարոյական և Գ. Մատակարարական վիճակին համար՝ Հիմնադիր Ժողովին:

Յօդ. 26. Տնօրէն Խորհրդոյ պաշտօնը երկամեայ է և անդամները վերընտրելի են:

Յօդ. 27. Տնօրէն Խորհրդոյ երկամեայ պաշտօնը լրանալէ վերջ՝ 5ը միայն կը փոխուին, իսկ 4ը վիճակով կը վերահաստատուին իրենց պաշտօնին մէջ:

#### ԵԿԱՄՈՒՏ

Յօդ. 28. Ընկերութիւնս 5 տեսակ սովորական հասոյթ ունի.

1. Անդամուհիներու ամսավճար.
2. Նուիրատու անդամներու ամսական կամ տարեկան նուէր.

3. Տարեկան հանգանակութիւն.

4. Սարքուած նպաստի հանդէմներ.

5. Թուակաւոր աշակերտուհիներու ամսավճար-ները:

Յօդ. 29. Ընկերութիւնս կ'ընդունի նաև այլ և այլ նուէրներ կամ կտակներ, զորս նուիրատուին փափաքին համեմատ, կամ եթէ որոշուած փափաք մը չկայ, Տնօրէն Խորհրդը պատշաճ դատած միջոցներով կ'արդիւնաւորէ:

Յօդ. 30. Ընկերութեանս հասոյթին 9/0 10ը պահեստի է:

Յօդ. 31. Ընկերութեան Գանձապետին քով միայն 20 սակի գումար մը կը մնայ և մնացեալը դրամատան մը մէջ շահու կը դրուի: Իսկ եթէ դրամագլուխը 100 սակոյ հասած է, Ազգ. Ընկերութեանց կազմական կանոնագրի 10րդ յօդուածի համաձայն պիտի գործածուի:

Յօդ. 32. Եթէ Ընկերութիւնս ստակի պէտք ունենայ, պէտք եղած գումարը դրամատունէն կը գանձուի Տնօրէն Խորհրդոյ Ատենապետին, Ատենադպրին և Գանձապետին ստորագրութեամբ վաւերացուած և կնքուած նամակով մը:

Յօդ. 33. Եթէ վերոյիշեալ անդամուհիներէն մէկը հրաժարի, Ընկերութեանս Տնօրէն Խորհրդը պարափ վերընտրուած Ընկերուհւոյն անունը անմիջապէս իմացնել դրամատան:

Յօդ. 34. Երբ Ընկերութեան դրամագլուխը աւելնայ, Տնօրէն Խորհրդը հարկ դատած միջոցով կ'արդիւնաւորէ զայն, Հիմնադիր Ժողովին հաւատութիւնով:

ՀԱՅՈՒՆԻՑՆՈՒԹԻՒՆ ԵԽՎԵՐՍԱԲՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 35. Հիմնադիր Ժողովը Տնօրէն Խորհութան նախորդ տարուան հաշուեսումարները ընդունելէ վերջ՝ իր մէջէն գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ 4 կամ 5 անդամուհներէ բաղկացած հաշուեքնիչ Յանձնաժողովը մը, որուն պաշտօնն է քննել տոմարները և ճշտելէ յետոյ ներկայացնել Հիմնադիր Ժողովին նկատառաման։ Հաշուեքնիչ Յանձնաժողովի պաշտօնը առժամեայ է, այս Ժողովին կ'անդամակցին ընկերութեան երկու համարակալները։

Յօդ. 36. Հիմնադիր Ժողովը իր կազմած Յանձնաժողովին միջոցաւ հաշիւները քննելէ և վաւերացնելէ յետոյ կամ թերթերու մէջ հրատարակել կուտայ և կամ առանձին տպագրել տալով մէն մի օրինակ կը դրկէ իր Նախագահ Ս. Պատրիարք Հօր, բոլոր բաժանորդներուն և նույիրատուներուն ըստ 7րդ. յօդուածի Աղք. Ընկ. Կազմական կանոնադրի։

Յօդ. 37. Այս հիմնական կանոնագրութիւնը վերաքննելի է երկու տարի ետքը, սակայն եթէ պարագաները ստիպեն՝ Հիմնադիր Ժողովոյ անդամուհներուն  $\frac{3}{4}$  ին հաւանութեամբ կարելի է բարեփոխութեան ենթարկել զայն, պայմանաւ որ հիմնական և կազմական պայմանաց մէջ ո և է փոփոխութիւն չներմուծուի, առանց կեզր. Վարչութեան հաւանութեանը։

Յօդ. 38. Երբ որ ընկերութեանս անդամոց թիւը տասնէն պակասի իջնէ, յայնժամ ընկերու-

թիւնս լուծեալ պիտի համարուի, և ընկերութեան վերաբերեալ գոյք, դրամ ևլն. պիտի գրաւուին Աղք. Վարչութեան կողմէ՝ ընկերութեան բարեգործական նպատակին համաձայն գործածուելու համար՝ ըստ 14րդ յօդուածու կանոնագրոյ:



ՀԻՄՆԱԺՈՎ ԺՈՂՈՎՈՅ

Յօդ. 1. Ընկերութեանս տարեկան շրջանը Սեպտեմբերին սկսելով 0դոստուին վերջը կը լրանայ:

Յօդ. 2. Ժողովին օրինական նիստը որոշուելէն առնուազն 5 օր առաջ և բացառիկ նիստերէն 2 օր առաջ հրաւիրագրերը կը բաժնուին Ատենադպրին ստորագրութեամբ վաւերացած, որոյ մէջ նշանակուած կ'ըլլան ժողովատեղին, օրը, ժամը և օրակարգը։

Յօդ. 3. Ատենաը կը բացուի ընկերուհիներու կէսին ներկայութեամբ, նախորդ նստին բացակայ ընկերուհիք նոյն նստին մէջ արուած որոշումներուն վրայ դիտողութիւն մ'ընելու իրաւունք չունին։

Յօդ. 4. Թէ՛ Հիմնադիր Ժողովին և թէ Տնօրէն Խորհութան մէջ նախորդ նստի ատենագրութեանց վրայ եղած դիտողութիւնք՝ յաջորդ նիստերու մէջ նկատողութեան կ'առնուին միայն, եթէ

157-17

անդամուհիներու  $\frac{1}{3}$  ի կողմէ գրաւոր փափաք  
յայտնուած է վերաքննելու նոյն որոշումը :

Յօդ. 5. Ատենագրութիւնները ժողովի մէջ  
կարդացուելէ առաջ պէտք է Ատենապետին եւ  
Ատենադպրին ստորագրութիւնով վաւերացուած  
ըլլան :

Յօդ. 6. Եթէ որոշուած ժամուն ատեանը  
բացուելու համար ընկերուհիներու անհրաժեշտ  
եղած թիւը լրացած չէ, ժամ մը եւս կ'սպասուի.  
Եթէ սոյն յապաղումէն վերջն ալ նոյն թիւը չգոյա-  
նայ, ժողովը կը ցրուի յաջորդ նիստին օրը որո-  
շելէ յետոյ :

Յօդ. 7. Յաջորդ նստին՝ անդամուհիներու $\frac{1}{3}$  ին ներկայութեամբ կը բացուի ատեանը :

Յօդ. 8. Հիմնադիր ժողովի դիւանը կը պատ-  
րաստէ նոյն նստին օրակարգը, սակայն Տնօրէն  
Խորհրդոյ կողմէ ներկայացուած ո՛ւ և է ստիպողա-  
կան խնդրի տուաջնութիւնն կրնայ արուիլ :

Յօդ. 9. Դիւանը կրնայ պատճառով մը հրա-  
փրագրին մէջ Օրակարգը չի դնել՝ պատասխանա-  
տուութիւնը իր վրայ առնելով :

#### ՊԱՇՏՈՆ ԴԻՒԱՆԻ

Յօդ. 10. Ատենապետին պաշտօնն է ատեանը  
բանալ և փակել, կանոնագրին օրէնքներուն հետե-  
ւիլ և ժողովին բարեկարգութիւնը պահել :

Յօդ. 11. Հիմնադիր և Տնօրէն ժողովներու  
մէջ, եթէ Ատենապետը բացակայ ըլլայ՝ փոխ Ատե-  
նապետը կը վարէ անոր պաշտօնը. Եթէ նա ալ բա-  
ցակայ է՝ այն ատեն ժողովը քուէի առաւելու-

թեամբ առժամանակեայ ատենապետ մը կ'ընարէ,  
նոյնպէս նաև Ատենադպիրին համար :

Յօդ. 12. Ատենապետին պաշտօնն է հրա-  
փրագրերը պատրաստել և դրկել, նիստերու ար-  
ձանագրութիւններն ընել և իւրաքանչիւր նստի  
ներկայացուած գրութիւնները մասնաւոր տետրին  
մէջ պահել :

Յօդ. 13. Իւրաքանչիւր ընկերուհի պէտք է  
խօսելէ առաջ Ատենապետէն խօսք խնդրէ :

Յօդ. 14. Պէտք է որ Ատենապետը նիւթէն  
երբէք չը չեղի:

Յօդ. 15. Եթէ Ատենապետը կամ ընկերու-  
հիներէն ումանք ուզեն վիճաբանութեան վերջ տալ՝  
Ատենապետը կրնայ մեծամասնութեան հաւանու-  
թեամբ վերջ տալ նոյն վիճաբանութեան :

Յօդ. 16. Տնօրէն Խորհրդոյ կողմէ եկած ու է  
գրութիւն պէտք է նոյն ժողովի Ատենապետին և  
Ատենադպրին ստորագրութիւնը կրէ (Տարեկան հաշ-  
ուեցոյցը Գանձապետին և ժողովոյ Հաշուակալին  
ստորագրութիւնն եւս կրէ):

#### ՔՈՒԷՍ. ՐԿԱՌԹԻՒՆ

Յօդ. 17. Հիմնադիր ժողովը քուէով կ'ո-  
րոշէ իրեն յանձնուած ու և է խնդրին կարգը :

Յօդ. 18. Ժողովը 2 տեսակ քուէարկութիւն  
ունի, յայտնի և գաղանի. այս վերջինը կը կա-  
տարուի ընկերուհիներու մէկ քանիին առաջարկու-  
թեամբ :

Յօդ. 19. Եթէ քուէի հաւասարութիւն պա-  
տահի՝ Ատենապետը կրկին քուէ կուտայ :

Յօդ. 20. Երեք անգամ յաջորդաբար առանց բանաւոր պատճառի Հիմնադիր Ժողովի նիստերուն ներկայ չգտնուող ընկերուհի մը կարելի է հրաժարեալ նկատել՝ ներկաներու ձայնի մեծամասնութեամբ։

Յօդ. 21. Դիւանի ընկերուհի մը երբ առանց բանաւոր պատճառի 3 նիստի յաջորդաբար բացակայ գտնուի, հրաժարեալ կը նկատուի։

### ՀԻՄՆ. ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ՏՆՈՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԸՍ.ԲՈ.ԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 22. Հիմն. Ժողովը պէտք է իր որոշումները գրաւոր կերպով հաղորդէ Տնօրէն Խորհրդոյ, իր գումարումէն առ առաւելն 3 օր վերջ։

Յօդ. 23. Տնօրէն Խորհրդով ինքը կ'ընտրէ իր Դիւանը և Հիմն. Ժողովին կիմացնէ։

### ԴԻՒԱՆԾՈՒՅՆ

Յօդ. 24. Ընկերութեան վերաբերող ամէն գրութիւն, որ անմիջական գործադրութեան չի կարօտիր, Դիւանատան մէջ կը պահուի, Հիմն. Ժողովի թուղթերը իր Ատենապետին հսկողութեան տակ, իսկ Տնօրէն Խորհրդոյ թղթերը իր Ատենապետին հսկողութեան տակ. երբ այս պաշտօնեաներէն մէկը հրաժարի, պարտաւոր է իրեն յանձնուած ամէն բան յաջորդին յանձնել։

### ԴԻՒԱՆ ՀԻՄՆ. ԺՈՂՈՎԾ

Յօդ. 25. Երբ Հիմնադիր Ժողովի Դիւանին պաշտօնը լրանայ, վերջին նստին մէջ Ժողովը վերընտրութիւն կ'ընէ։

Յօդ. 26. Դիւանը քուէի բացարձակ առաւելութիւնով կ'ընտրուի։

### ՏՆՈՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Յօդ. 27. Տնօրէն Խորհրդոյ ունի Ատենապետ մը, Ատենապետի մը, Գանձապետ մը, որ թէ Հիմն. Ժողովի և թէ Տնօրէն Խորհրդոյ պատասխանատու է, և մէկ Հաշուակալ։

Յօդ. 28. Տնօրէն Խորհրդոյ պաշտօնն է հոգտանիլ Ընկերութեան հասոյթները աւելցնելու, հսկել վարժարանի ծրագրին անթերի գործադրութեան, բարւոք մատակարարութեան և բարեկարգութեան. Ընկերութեան պիտօնէին ներած սահմանին մէջ, թէ Հայարնակ գաւառներէն, և թէ Պօլիսէն որոշ թուով և վիճակաւ ընտրել գլխաւորաբար այն ձրիավարժ և կիսաթոշակ աշակերտուհները, որոնք պիտի պատրաստուին վարժուէի ըլլալու. տալ նախորդ տարուան հաշուելիու և յաջորդ տարուան նախահաշիւը պատրաստելով՝ Հիմնադիր Ժողովոյ քննութեան յանձնել. նոյնպէս ներկայացնել Վարժարանին Ռւսումնական վիճակին տեղեկագիրը՝ ամէն դպրոցական տարեշրջանի վերջը։

Յօդ. 29. Եթէ Տնօրէն Խորհրդոյ անդամուհներէն մին ժամանակէն առաջ հրաժարի, նոյն Խորհրդով Ընկերուհիներու ցանկ մը կը ներկայացնէ Հիմն. Ժողովին, որոյ մէջէն Հիմն. Ժողովը կ'ընտրէ։

Յօդ. 30. Եթէ Ընկերութեան պահեստի գումարը աւելնայ, Տնօրէն Խորհրդով պարտի անոր համար ապահովութեան միջոցներ առաջարկել Հիմն. Ժողովին։

Յօդ. 31. Տնօրէն Խորհուրդը կը պատրաստէ  
Ընկերութեան ելմտացոյցը, և ստորագրուած իր  
Ատենապետէն, Ատենադպրէն և Գանձապետէն,  
կը ներկայացնէ Հիմն. ժողովին և անոր վաւերա-  
ցումը ստանալէ ետք՝ կը գործադրէ:

Յօդ. 32. Տնօրէն Խորհուրդը կը գումարուի  
շաբաթը մէկ անգամ:

Յօդ. 33. Երեք անգամ յաջորդաբար Տնօ-  
րէն Խորհուրդոյ նիմունուն բացակայ գտնուող ըն-  
կերուհիք հրաժարած կրնան նկատուիլ:

### ՎԵՐԱԿՐԵՆՈՒԹԻՒՆ

Այս հիմնական կանոնադիրը 2 տարին անգամ  
մը կրնայ բարեփոխութեան ենթարկուիլ:



ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԵ ՔՍՂՈՒԱԾՆԵՐ  
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՑՈՒՀԵԱՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1. Ընկերութեան վարժարանին մէջ ընդուն-  
ուող աշակերտուհին առնուազն 13 տարեկան պէտք է  
ըլլայ:

2. Ամէն գիշերօթիկ աշակերտուհի բժշկի վկա-  
յութեամբ պէտք է առողջ կազմուածք ունենայ,  
նաև սորվելու ընդունակութիւն:

3. Այս գիշերօթիկ աշակերտուհիք պէտք է  
դաւառացի խիստ աղքատ ծնողաց զաւակ ըլլան և  
գէթ նախնական կրթութեան Ա. շրջանը աւարտած:

4. Դաւառներէն աշակերտուհի խրկուելէ ա-

ռաջ պէտք է խմաց տրուի Ընկերութեան թէ վե-  
րոյիշեալ պահանջուած հանգամանքները ունի, նաև  
նոյն գաւառէն վստահելի մէկը պէտք է քննէ և  
վկայութիւն տայ այս մասին: Մինչև որ այդ վկա-  
յութիւնը չստանայ, Ընկերութիւնը չի կրնար ըն-  
դունիլ ներկայացող աշակերտուհին:

5. Գիշերօթիկ ձրիավարժ աշակերտուհեաց  
ընտրութիւնը կը կատարուի հիմնական կանոնագրին  
28րդ. յօդուածին արամադրութեանը համաձայն:

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԹՈՇԱԿԱԽՈՐ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՑՈՒՀԵԱՅ

1. Գիշերօթիկ աշակերտուհիները պարտին  
վճարել 24 Օսմ. ոսկի տարեթոշակ:

2. Վճարումները կը կատարուին անպայման  
երկու անգամէն. Սեպտ. և Փետր. ամիսներու  
սկիզբը:

3. Գրենական պիտոյք, հագուստ և անկողնի  
կազմած ծնողաց կը պատկանին, ինչպէս նաև դե-  
ղօրայք:

4. Գաւառացի աշակերտուհիները պղտիկ ար-  
ձակուրդները (Նոր տարի, Բարեկենդան և Զատիկի)  
Վարժարանին մէջ կրնան անցնել, եթէ իրենց  
ծնողքին կողմէն ներկայացուած պաշտպան մը չու-  
նենան, իսկ տարեկան արձակուրդը դպրոցին մէջ  
անցնել փափաքողները պարտին մասնաւոր վճա-  
րում մը ընել:



# ԴՊՐՈՑԱՍԵԲ ՏԻԿՆԱՅՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Վերաբացուած 1909 Սեպտեմբեր

ԳՈՒՄ. Գ.Ա.ԲՈՒ



## ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

### ՀԱՅԵՐԵԿՆ ԼԵԶՈՒ

Միջին ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. Տ. ՏԱՐԵ

ՔԵՐԱԿԱՑՈՒՐԻՒՅ. — Աշխարհարար լեզուի

Ընթերցում. — Առողանութիւն, Ռւզազը, Բառազիտութիւն

ԽօսակցուրիւՅ. — Ընթերցման նիւթին վրայ

ՇարադրուրիւՅ. — Առակներ, Մանրագէպեր, Ընտանի  
նիւթեր, Պատիկ նամակներ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

Ա. ՏԱՐԵ

ՔԵՐԱԿԱՑՈՒՐԻՒՅ արդի հայերէնի (Ընդարձակ)

Ընթերցում բացատեալ հատընտիր հատուածներու առո-  
գանութիւն, Ռւզազրութիւն, Բառազիտութիւն.

ՇարադրուրիւՅ. — Առամին, Ընտանեկան, Իրազիտական  
Բարյական, Պարզ նամակներ

Բ. ՏԱՐԵ

ՔԵՐԱԿԱՑՈՒՐԻՒՅ. — (Արդի հայերէնի). Շարունակութիւն

ՔԵՐԱԿԱՑՈՒՐԻՒՅ. — Գրաբար լեզուի. Կանոնաւոր և ան-  
կանոն հոլովմունք և բայեր

— 25 —

Ընթերցում. — Բացատեալ, Ամերիտում զաղախարներու և  
նիւթերու, Առողանութիւն, Ռւզազրութիւն, Բառազիտութիւն:

ՇարադրուրիւՅ. — Բարյական, Տնտեսազիտական, Պարզ  
դրական նիւթեր, Նամակազրութիւն:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑ)

Ա. ՏԱՐԵ

ՔԵՐԱԿԱՑՈՒՐԻՒՅ. — Բանասիրական Քերականութիւն,  
Հնչարանութիւն և Ստորգարանութիւն:

Ընթերցում. — Գրական հատուածներու ընթերցում, Ամփո-  
փում, ընդլայնում նիւթերու:

Գրաբար լեզու. — Քերականութիւն, Վերլուծութիւն,  
Թարգմանութիւն. Ա. Գրոց հատուածներու:

ՇարադրուրիւՅ. — Նկարազրութիւն, Անձնական տպա-  
ւորութիւններ, Տեսութիւններ և Խորհրդածութիւններ, Նամակա-  
զրութիւններ:

Բ. ՏԱՐԵ

ՔԵՆԵԶԱՑՈՒՐԻՒՅ. — Լեզուական սկզբունքներու ընթերց-  
ման կտրոներու վրայէ:

ԳրաբիտուրիւՅ. — Ոճ և իր յատկութիւնները, Գալա-  
փաններու զիւտ, Յօրինուած և Գասաւորութիւն, Գրազիտական  
ձեւեր, Փախարերութիւն, Այլարանութիւն:

ՄատենագրուրիւՅ. — Պատմ. Հայ Մատենագրութեան-  
մինչև Ժ. գար:

Գրաբար լեզու. — Ընդարձակ Քերականութիւն, Ընթեր-  
ցանութիւն հատընտիր հատուածներու, Քերակ. Վերլուծութիւն:

ՇարադրուրիւՅ. — Տեսութիւններ, Ուսումնասիրութիւն-  
ներ (զրական, պատմական, ազգային նիւթերու վրայ):

Գ. ՏԱՐԵ

ԾանօթուրիւՅ. — Համառօտ արդի Հայ զաւառաբարբառ-  
ներու վրայ:

Ընթերցում. — Գրական և Քննադատական ուսումնասի-  
րութիւններ:

**Գրագիտուրիւն.** — Գրական սեռեր, Տաղաջափութիւն:  
Մատենագրական պատմ.—ԺԴ. դարէն մինչև մեր օրերը:

**Գրաբար լեզու.** — Ընդարձակ թերակ. Շարադաստութեան  
մասը, Թարգմանութիւն, Հայկաբանական վերլուծութիւն ընտիր  
զրուածներէ:

**Տարադրուրիւն.** — Շարունակութիւն Բ. տարւոյ:

## Տ Ա Ճ Կ Ե Ր Է Ն Լ Ե Զ Ո Ւ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՑԻՆՈՑ)

### Ա. ՏԱՐԻ

Տառերը հանջնալ և զլել, Միավանկ, Բազմավանկ բառեր  
կարդալ և զրել:

Հասարակ ընթերցում ձեռագրի և տպագրի:  
Օրինակութիւն ձեռագիր հասուածի:

**Ուղղագրուրիւն.** — Նախադասութիւններ ուղղագրել զրա-  
տախտակի վրայ:

**Արտասանուրիւն.** — Ընթերցանութեան նիւթը պատմել  
թուրքերէնով:

**Գեղագրուրիւն.** — Պարզ ձեռագրի վարժութիւն, Տառե-  
րու միացում:

### Բ. ՏԱՐԻ

**Ընթերցում.** — Թարգմանութիւն ձեռագրի և տպագրի,  
Օրինակութիւն ձեռագրի:

**Ուղղագրուրիւն.** — Ընթերցանութեան հասուած մը ուղ-  
ղագրել:

**Արտասանուրիւն.** — Ընթերցանութեան նիւթը պատմել  
թուրքերէնով:

**Քերականուրիւն.** — Համաւոտ թուրք և Պարսկ. Քերա-  
կանութիւն, Քերականական լուծում:

**Գեղագրուրիւն.** — Նախադասութիւններ զրել:

### Գ. ՏԱՐԻ

**Ընթերցում.** — Ձեռագրի և տպագրի, Թարգմանութիւն,  
Հոմանիշներով Թարգմանել:

**Ուղղագրուրիւն.** — Ընթերցուածէն կամ լրազրէն մաս մը  
ուղղագրել տետրակին մէջ:

**Արտասանուրիւն.** — Ընթերցանութեան նիւթը պատմել  
թուրքերէնով, Պարզ ոտանաւոր հասուածներ զոյ սորվիլ:

**Քերականուրիւն.** — Համաւոտ թուրք և Պարսկ-Արա-  
բերէն Քերականութիւն, Քերականական լուծում ընթերցման հատ-  
ուածին վրայէն:

**Տարադրուրիւն.** — Բարոյական պարզ և կարծ պատմու-  
թիւններ, պարզ նկարագրութիւններ, ընտանեկան համակերպ:

## Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն Լ Ե Զ Ո Ւ

ՆԱԽԱԿՐԹԱՎԱՆ ԶՈՐՍ ՇՐՋԱՆ

### Ա. ՏԱՐԻ

**Քերանացի վարժուրիւններ.** — Խօսելավարժութիւն:

**Ընթերցանուրիւն.** — Կարգալ, իմաստը հասկնալ:

**Թարգմանուրիւն.** — Ընթերցման Ա. Գրքէն:

**Գրավարժուրիւն.** — Ընթերցանութեան գասերը ընդօրի-  
նակի, Ուղղագրութիւն ընթերցանութեան դասէն:

**Քերականուրիւն.** — Ծանօթութիւն բայերու և բառերու,

### Բ. ՏԱՐԻ

**Ընթերցանուրիւն.** — Բ. Գիրք:

**Խօսելավարժուրիւն.** — Ընթերցում, Բացատրութիւն,  
Թարգմանութիւն:

**Բառագիտուրիւն.** — Անոն, Ածական, Բայ, Մակրայ:

**Գրաւոր վարժուրիւններ.** — Ընդօրինակութիւն, Ուղ-  
ղագրութիւն կարդացուածէն:

**Քերականուրիւն.** — Կանոնաւոր և անկանոն բայերու  
խոնարհում, Ֆրանս, Իրահանգներ:

### Գ. ԵՒ Դ. ՏԱՐԻՆԵՐ

**Ընթերցանուրիւն.** — Գ. Գիրք:

**Խօսելավարժուրիւն.** — Քերանացի Շարադրութիւն:

**Ընթերցանուրիւն.** — Խօսակցութեան ձեւով  
այլեւայլ նիւթերու վրայ:

**Գրաւոր վարժութիւններ.** — Դեղազրութիւն, Ուղղագրութիւն:

**Քերականութիւն.** — Քերականական կանոններու կիրար-  
կութիւն, Թարգմ. Հայերէնէ ի ֆրանսերէն:

### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՅ)

Ա. Բ. Գ. ՏԱՐԻՆԵՐ

**Ընթեցանութիւն և հօսելավարժութիւն.** — Բն-  
քերցում հատընտիր հասուածներու, Բացատրութիւն, Թարգմանու-  
թիւն, Ամփոփում հանդէմներէ, Լրազիններէ ընթեցում, Ծանօթու-  
թիւն ֆրանսական գրականութեան վրայ, և կարդացուած հեղինակ-  
ներու վրա:

**Թերանացի շարադրութիւն.** — Արտասանութիւն:  
**Գրաւոր վարժութիւններ.** — Դեղազրութ. Ուղղազրութ:

**Շարադրութիւն.** — Լրացւցիչ կարեւոր և զործնական  
գիտելիք, Թարգմանութիւն Հայերէնէ ի ֆրանսերէն:

### ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՐՃՈՒԹԻՒՆ

#### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՅ)

Ա. ՏԱՐԻ

**Մանկաբանութիւն** (Pédologie) կամ Հոգեբանութիւն մանկան:

Բ. ՏԱՐԻ

**Ուսուցչութիւն.** — Դպրոցական կազմակերպութիւն և վար-  
չութիւն:

Գ. ՏԱՐԻ

Պատմութիւն մանկավարժութեան:  
Վերլուծումն մանկավարժական կարեւոր երկասիրութեանց  
Մասնաւոր դասընթացք տեսական և զործնական ֆրէսկէնան

### ԿՆՈՉԱԿԱՆ ԴԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՅ)

Ա. ՏԱՐԻ

**Առաջին տեսեանութիւն և Առողջապահութիւն.** —  
Կինը և Տանտիկինը, Կինը հիւանդապահուի, Առաջնին դեղաբանն:

Բ. ՏԱՐԻ

**Բնակարան.** — Զգեստ, Մնունդ, Մննդական դրութիւններ:

Գ. ՏԱՐԻ

**Մանկատաճութիւն.** — Առաջնին հաշուակալութիւն:  
Բնիերային մանակապիտութիւն և Առողջապահութիւն:  
Մայրական Մանկավարժութիւն:

**Պործնական տնարառութիւն.** — (աւկել, անօթներ լուար,  
տունը մաքրել, կրակուր պատրաստել, լուացը ընել, արդուկել,  
սեղան նստիլ, և լն., և լն.):

### ԿՐՈՆ ԵՒ ԵԿԵՂԵՑՍԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ա Կ Ր Բ Ա Ր Ա Ն

Ա. Բ. ՏԱՐԻՆԵՐ

**Տարր. ուսումն Կրօնի.** — Կրօն և իր ծագումը, Համա-  
ռու եկեղեցական պատմութիւն:

Գ. ՏԱՐԻ

**Սպգային եկեղեցական պատմ.** — Դ. դար, Դրի զիւ-  
տին, հետեւանքը, Հայ եկեղեցին Ե. դարէն մինչև Ժ. դար:

Դ. ՏԱՐԻ

Եկեղեցական գործիչներ, Ժողովներ, Հայ եկեղեցւոյ վիճակը  
Ժ. դարէն մինչև Ժ. դար, Հաւատամբը և անոր բացատրու-  
թինը. Հայ, Ցոյն, Լատին, Բողոքական դաւանաբանական ու Ժի-  
սական տարրերութիւն:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑ)

Ա. ՏԱՐԻ

**Ճնդիանուր եկեղեցական պատմ.** — Պատմական կապակցութիւններ Հայ եկեղեցւոյ պատմութեան հետո

Բ. ՏԱՐԻ

Հայ. և Բիւզանդական եկեղեցիք Ե. դարէն, Ժ. դարէրու Հայ. և Հռովմէական եկեղեցիք Ժ. դարէն, Ժ. դարէրու Հայ. եկեղեցւոյ հոգեւոր երգերու նկարագիրը:

Գ. ՏԱՐԻ

**Թաղդատական կրօնագիտուրին.** — Կրօնքներու ծառումը և դիմայեղումները, Քրիստոնէական հնախօսութիւն:

Գ Ի 8 Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Ա. ՏԱՐԻ

**Իրազիտուրին.** — Առողջահական պարզ խրաժներ:

Բ. ՏԱՐԻ

Տարրական ծանօթութիւնը Բնական պատմութեան և Բնական դիտութեանց:

Գ. ՏԱՐԻ

Շարունակութիւն տարրական ծանօթութեանց Բնական պատմութեան և Բնագիտութեան, Ճարտարութեան, Երկրագործութեան, Առողջապահութեան և Առողջապահութեան վերաբերեալ պիտանի ծանօթութիւններ:

Դ. ՏԱՐԻ

Բնագիտական և Բնալուծական դիտելիք, Տեղույն յատուկ ճարտարութիւններ, Պարտիզամշակութիւն:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑ)

Ա. ՏԱՐԻ

Հանքային տարրաբանութիւն, Բնագիտութիւն, Հանքաբանութիւն և Երկրաբանութիւն:

Բ. ՏԱՐԻ

Գործարանաւոր տարրաբանութիւն, Շարունակութիւն Բնագիտութեան, Բուսական Բնախօսութիւն:

Գ. ՏԱՐԻ

Կենդանաբանութիւն, Կենսաբանութիւն, Շարունակութիւն Բուսաբանութեան, Բնտանիքներ և այլն:

Ո Ւ Ս Ո Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Ա. Բ. ՏԱՐԻՆԵՐ

**Թօռւաբանուրին.** — Զորս զործողութիւնը ամբողջ Խուոց և տաննորդական կոտորակաց. — Նախնական ծանօթութիւնը հասարակ կոտորակաց վրայ, Մէծրական չափեր, Բարդասութիւն թուրքից հին և նոր չափերու, Խառն թիւեր, Միութեան կանոն, համեմատութիւն, տոկոս, զեղչ, և այլն:

**Երկրաչափուրին.** — Գիծեր, անկիւններ, շրջանակ և բոլորակ, Հաստատուն մարմիններ:

Գ. Գ. ՏԱՐԻՆԵՐ

**Թօռւաբանուրին.** — Մտաւոր հաշիւներ չորս զործողութեանց վրայ:

**Հասարակ կոտորակ.** — Մէծրական չափեր, Համեմատութիւն, տոկոս, զեղչ, համեմատական բաշխում:

**Երկրաչափուրին.** — Մակարդակ Երկրաչափութիւն, Գծագրութիւն, Միջոցի մէջ Երկրաչափութիւն:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑ)

Ա. ՏԱՐԻ

**Գրահաւիւ.** — Նախնական ծանօթութիւնը, Զորս զործողութիւններ, Զորս զործողութիւնը հասարակ կոտորակաց, Ա. աստիճանի հաւասարութիւն:

**Երկրաչափուրին.** — Տեսական Երկրաչափութիւն:

Բ. ՏԱՐԻ

**Գրահաւիւ.** — Ա. աստիճանի հաւասարութիւնը, Ար-

մատականք, թ. աստիճանի հաւասարութիւնք, թաղաղը և տոկոս

և տարեւորութիւնք:

**Երկրաչափուրիւն.** — թաղանակեանց մակերեւոյթները,  
Միջոցի մէջ երկրաչափութիւն:

**Գ. ՏԱՐԻ**

**Երկրաչափուրիւն.** — Գլան, կռն, գունդ իրենց տեսու-

թիւններով, կոր զիծեր իրենց զլիսաւոր տեսութիւններով:

**Ցիեզերագրուրիւն.** — Արեգակնային զրութիւն, Երկիր և  
միւս մոլորակները, Արեգական և Լուսնի խաւարմունք, Դիսաւորք

և աստղեր:

**ՊԱ.ՏՄՈՒԹ.ԻՆ**

**ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ**

**Ա. ՏԱՐԻ**

**Ցնդիանուր տեսուրիւն.** — Մարդկային ցեղեր, Հին ազ-

գեր, Համառօտ պատմ. Հայոց (Հայկացեանք):

**Բ. ՏԱՐԻ**

Ցոյնք, Հռովմայեցիք, Հայը (Արշակունիք):

**Գ. ՏԱՐԻ**

**Միշին դար.** — Հայը (Թագրաստունիք և Ռուբենեանք):  
Պատմ. Օսմանցւոց:

**Դ. ՏԱՐԻ**

Պատմութիւն նոր ազգաց, Պատմութիւն Օսմանցւոց, Թաղթո-  
կանութիւնք Հայոց,

**ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՇԻՆՈՑ)**

**Ա. ՏԱՐԻ**

**Միշին դար.** — Ոսկեդար Հայոց, Խաչակիրներ, Սելմուզ-  
եանք, Պոլսոյ առումը, նոր աշխարհներու զանուիլը, Գիւտեր,  
Մտքերու յեղափոխումը:

**Բ. ՏԱՐԻ**

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւն, նոր դար ու դէպեր, Ժամանա-

կակից դէպեր, Ազգային Սահմանադրութիւն, Զինաստան, Ճարոն,  
Հայկական նոր աղէտը:

**Գ. ՏԱՐԻ** (Նիւթ բանախօսութեան)

Հին ազգեր, Նկարազիք Միջնն դարու, Թաղաբական բարե-  
շրջութիւն, Ազգայնականութիւնք, Արեւելեան ինդիր, Նոր ազգաց  
ընկերական կարգեր, Կառավարական ձեւեր, Մամլոյ անկախութիւն:

**Ա.ՇԽԱՐՁԱԳՐՈՒԹ.ԻՆ**

**ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ**

**Ա. ՏԱՐԻ**

**Ընդիանուր գիտելիք.** — Երկրիս հինգ զլիսաւոր մասերը,  
Կ. Պոլիս և Վոսփորի նեղուցը:

**Բ. ՏԱՐԻ**

Թաղաբական աշխարհազրութիւն, Եւրոպա, Ասիա: Համառօտ  
աշխարհազրութիւն Եւրոպական և Ասիական Տանկաստանի:

**Գ. ՏԱՐԻ**

Ա.Փրիկէ, Ամերիկա և Ովկիանիա, Տարրական տիեզերազրու-  
թիւն, Թաղաբական մտնեսութիւն, Օսմանեան օրէնադրութիւն,  
Պատրիարքարան Հայոց, Եկամուտ, տոկոս Թոշակ:

**Դ. ՏԱՐԻ**

Աշխարհազրութիւն բնական, բաղաբական, աշխարհի հինգ  
մասերը, Ընդարձակ աշխարհազրութիւն Օսմանեան Պետութեան,  
Հայ գաղթականութիւնք:

Թաղաբական մտնեսութիւն, Հարստութիւն, արտադրութիւն  
հարստութեան, Շահ, Եկամուտ, վարձք, աւուրչէք, Փոխանակու-  
թիւն, Շահաստանք, առեւտրական տազնապ, Ազատութիւն, Հաւա-  
սարսւթիւն, Եղբայրութիւն:

**ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՇԻՆՈՑ)**

**Ա. ՏԱՐԻ**

**Երկրագուն.** — Հինգ մասեր աշխարհի ընդարձակութիւն,

Բնական աշխարհազրութիւն. Ամերիկա, Ովկիանիա, Ասիա, Ափ-  
րիկէ՝ Քաղաքական աշխարհազրութիւն: Վարժութիւն քարտէսա-  
գծութեան:

**Բ. ՏԱՐԻ**

Եւրոպա, Բնական աշխարհազրութիւն, Քաղաքական աշխար-  
հազրութիւն ընդարձակօրէն, Թուրքիա և Գաղութը՝ Բնական  
Քաղաքական աշխարհազրութիւն ընդարձակօրէն: Քարտէսագծութ:

**Գ. ՏԱՐԻ**

Ընդհ. տեսութիւն աշխարհի հինգ մասերու, Ընդարձակ աշ-  
խարհազրութիւն Օսմ. Պետութեան, Քարտէս ջրաներկիլ:

**ՔԱՐԺԱԿԱՆ ՏԵՍԵՍՈՒԹԻՒՆ**

(ՎԱՐԺՈՒՑԻՒՆՈՅ)

**Ա. ՏԱՐԻ**

**Մէարիմի օրէց.** — Ազգ. Ռւսումն. Խորհուրդ, Կրթական  
Տեսուչ և դպրոցի Տեսչութիւն:

**Բ. ՏԱՐԻ**

**Կազմակերպուրիւն Օսմ. Պետութեան.** — Օսմանեան  
Օրէնդրութիւն, Քաղաքական ընթացիկ զործառնութիւնը:

**Գ. ՏԱՐԻ**

Արտադրութիւն, Աշխատութիւն, Դրամազլուխ, Փոխանակու-  
թիւն, Սպառումն հարստութեան, Պետութեան հարկեր, Ապահովա-  
գութիւն, Խնայողական սնառուկ:

**ԶԵՌԱԿԱՆ ՍԵԽԱՍՈՒԹԻՒՆ.Բ**

**ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ**

**Ա. ՏԱՐԻ**

Կար, Նորոգութիւն, Հիւսուածք, Պարզ բանուածք:

**Բ. ՏԱՐԻ**

Կար, Նորոգութիւն, Հիւսուածք, Բանուածք:

**Գ. ՏԱՐԻ**

Կար, Նորոգութիւն, այլեւալ հիւսուածք, Զարդարեղով՝  
բանուածքներ:

**Դ. ՏԱՐԻ**

Կար շրջազգեստի վրայ, Նորոգութիւն ճերմակեղէնի, Թելքաշ  
բանուածք և ֆլէշի բանուածք:

**ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ (ՎԱՐԺՈՒՑԻՒՆՈՅ)**

**Ա. ՏԱՐԻ**

Կար, Ճերմակեղէն երախայի, Ասղենկար (broderie), Նորո-  
գութիւն բրդեղէնի, Զեւազիտութիւն, Նախազիծեր ձեւել:

**Բ. ՏԱՐԻ**

Կար, Ճերմակեղէն զարդարուն, Ասղենկար՝ կտավի և մետաք-  
սեղէնի վրայ, Զեւազիտութիւն կանանց և արանց, Ճերմակեղէնի  
Նախատիպարներ ձեւել և միացնել:

**Գ. ՏԱՐԻ**

Կրկնութիւն նախորդ տարիներու վարժութեանց, Ասղենկար  
Նորոգ բանուածքներ, Թիւլի վրայ բանուածք, Զեւազիտութիւն,  
Կանանց չփակ, տղու հազուստ տիպարներ պատրաստել և ձեւել  
միացնել կտորները:

**ՄԱՐՄԱՐԱՆ. ՄԱՐՄԱՐԱՆ**

Ամէն դասարաններու Շուէտական մէթոսով:

**ԴԵՂԱԿՐՈՒԹԻՒՆ**

Հայերէն, Ֆրանսերէն և Թուրքերէն ամէն դասարաններու

**Գ.ԾԱ.Գ.ՐՈՒԹԻՒՆ**

Օրինակէ, բնականէն և արձաններէ ամէն դասարաններու,  
Ջրաներէ՝ Բարձրագոյն դասարաններու:

**ԶԵՌԱԿԱՆ ԵՐԱ.ՃԵՏՈՒԹԻՒՆ**

Ամէն դասարաններու անխայի, Գործիական երաժշտութիւն  
կամաւոր:

# ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱԿԻՈՐՈՒԹԵԱՄԲ

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԱՏԹԿՈՍ Բ. ՄՐԲԱՋՆԱԳՈՅՑ  
ԿԱՌՈՂԻԿՈՍԻ

Ն Ա Խ Ա Զ Հ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԵ ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Պատրիարք Ամենայն Հայոց Թուրքիոյ

Պ Ա Տ Ի Ո Յ Ա Ն Դ Ա Մ Ֆ

Գեր. Դանիէլ Եպիսկոպոս Յակոբեան, Տեղ. Երուսաղիմայ  
Պատրիարքութեան

Գեր. Վարդան Շ. Վ. Գասպարեան, Առաջ. Փոխ. Պրուսայի  
Գեր. Հ. Թովման Վ. Կէտիկեան. անդամ Մխիթարեան Պատ-

միաբանութեան Վիճնայի

Վահեմ Ճավիս պէջ. Նախարար Ելմական Գործոց.

Վահեմ Պողոս իաւա Նուլպար

Վահեմ. Տիկլ. Երանուիի Բարբող փաւա

Վահեմ. Տիկլ. Մատի Գ. Նորանունկեան

Ֆերիսէ հանրմ, Տէր Վարան Տպարանի

Տիկլ. Աննա Զայեան

Տիկլ. Արաբսի Բօլաս (Դանիրէ)

Տիկլ. Մատի Քարակօզ (Բարիզ)

Տիկլ. Մատի Աստարեան (Ֆիլիպէ)

Տիկլ. Մարկոսան

Տէր էւ Տիկլ. Տօֆ. Բաշայեան Խան (Պէտրէրէլէ)

Օր. Իննի Տ'Ապրո (Բարիզ)

— 37 —

Պրն. Աղէքսանդր Մանքաօօժ (Բարիզ)

Պրն. Ասուածառուր Բէկ Յովսէփեան (Զարամար)

Գրիգոր Էժ. Կիւմիւլերտան

Գրիգոր Էժ. Նորաւեւեան (Կիրասան)

Լեւոն Էժ. Քիւրտեան (Ռուսուր)

Տաքր. Կարապէս Էժ. Պետրոսեան

Համբարձում Էժ. Պօյանեան (Մուրաս)

Միհրան Էժ. Մուրատեան

Պրն. Մ. Ա. Սարուխան (Թիֆլիզ)

Պատրիկ Էժ. Կիւլպէնի

Ռարիկ Էժ. Մարկոսեան (Բարիզ)

Տիգրան Խան Քէլէկեան (Բարիզ)

Վահան Էժ. Մալէզեան (Գանիրէ)

## ԳԻՒԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՈՅ

Տիկլ. Եւփիմէ Թ. Աւեսիսեան

Տիկլ. Էօդէնի Մ. Մանուկեան

Տիկլ. Երանուի Վ. Օրմանեան

Օր. Յուլիանէ Սարգսեան

ԱՏԷԱՍՎԵՏ

ՎԻՆԻ ԱՏԷԱՍՎԵՏ

ԱՏԷԱԴՎԻՐ

ՎԻՆԻ ԱՏԷԱԴՎԻՐ

## Տ Ն Օ Բ Է Ն Ժ Ո Ղ Ո Վ

Օր. Թագուհի Պ. Պալքարեան

Օր. Արուսեակ Մ. Ֆրէնկեան

Տիկլ. Մըրունի Ս. Կուրտիկեան

Տիկլ. Երմոնի Կ. Ռուբէն

Տիկլ. Էլիզ Կ. Խորասաննեան

Օր. Ակիւլինէ Ճէլալեան

Տիկլ. Աստին Գ. Սերովչէն

Տիկլ. Աշուէն Ս. Հիւմիւզ

Տիկլ. Էպրու Ն. Քալիսեան

Տիկլ. Վերգին Ս. Ֆըմսրիլեան

ԱՏԷԱՍՎԵՏ

ՎԻՆԻ ԱՏԷԱՍՎԵՏ

ԱՏԷԱԴՎԻՐ

ՎԻՆԻ ԱՏԷԱԴՎԻՐ

ԳԱՆՃԱՎԵՏ

ՀԱՉՈՒԱԿՈՎ

ՎԻՆԻ ՀԱՉՈՒԱԿՈՎ

ԽՈՐԻՐՊԱԿԱՆՆԵՐ

**ԱՆԳԱՄԻՔ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՈՅ**

Տիկին Արմավեհի Մինսոնան  
Տիկ. Արուսեակ Ա. Մուլանեանեան  
Տիկ. Արշակունի Թ. Կեսարեան  
Տիկ. Արաբսի Աչմեան  
Տիկ. Արաբսի Շատան  
Տիկ. Արաբսի Տ. Սամիկեան  
Տիկ. Աճմիկ Հ. Լիմօնեան  
Տիկ. Աղանի Զամրեան  
Տիկ. Բերուզ Բիտէնեան  
Տիկ. Գալենիկ Տօֆք. Թորգոնեան  
Տիկ. Ելպիս Ե. Փափազեան  
Տիկ. Եւզինէ Շահնազար  
Տիկ. Զարուհի Մ. Մուրատեան  
Տիկ. Զարուհի Յ. Պանրի -  
Տիկ. Զարուհի Զարպինանելեան  
Տիկ. Հեղինէ Ասամուրեան  
Տիկ. Մաքրուհի Ա. Մելիօնեան  
Տիկ. Վերգինէ Մանուկեան  
Տիկ. Վերգինի Փօրուզայեան  
Տիկ. Փայլիկ Տօֆք. Մուրաթեան  
Տիկ. Գօնի Պ. Խօրասաննեան  
Օր. Արաբսի Ա. Ֆընքիեան  
Օր. Արմավեհի Փափազեան  
Օր. Զապէլ Եազրեան  
Օր. Զապէլ Զախարեան  
Օր. Հայկանուց Պօյանեան  
Օր. Տիրուհի Մուրատեան  
Օր. Տիգրանուհի Տիլսիկեան  
Օր. Մըրուհի Սիմօնովիչ  
Օր. Վիքրորիա Նորատումեկեան  
Օր. Օլլա Մ. Ազարեան

**ՈՐԲՈՒՀԻՆԵՐՈՒ ԲԱՐԵԽՆԱԾՄ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՆ**

*Սեղանիկի դաշտային հանդիսէ գոյացած 800  
ոսկիի փոխարկէն 8 որբուհիներ կը դասիարակուին  
վարժարանիս մեջ Եղմական գործոց Նախարար  
Վաևմ. Ճայիլս պէյի հովանառութեամբ*


Տիկին Մ. Գ. Կիւմիւեկեսան  
Տիկ. Աչմեն Հիւրմիւզ  
Տիկ. Արմենուհի Սերիլչէն  
Տէր եւ Տիկ. Աղաբէկ Կարապետեանց Ասրախան  
Տէր եւ Տիկ. Գարդիէլ Սերվիչէն  
Տիկ. Զարուհի Մուրատեան  
Տիկնայք Մարսիլէաբնակ ազգայնոց  
Տիկ. Ֆլուա Սարգիսեան (Նիկոմիդեա)  
Աղասի Էժ. Աղասեան  
Անտոն Էժ. Մարաչլեան (Պրուսա)  
Ազնիւ Էժ. Ֆիլիպէլիեան (Պրուսա)  
Անմէտ Էժ. Սարը Ալէմար զատէ (Կիւսասն)  
Տօֆք Բաւայեան Խան (Պէնտէրկէզ)  
Գառնիկ Էժ. Սարգիսօծ  
Հանի Գէորգ Էժ. Ղազարոսեան (Նիկոմիդիա)  
Գրիգոր Էժ. Կտաւեան (Նիկոմիդիա)  
Պրն. Գերասիմ եւ Տիկ. Թագուհի Լիօնիչեան (Պէնտէրկէզ)  
Հնչակեան Տիկնանց միուրիւն (Նիկոմիդիա)  
Աղատախնամ Մարմին (Բերայի)  
Կիլիկեան որբախնամ Տիկնանց Ընկերութիւն (Մազրի-զիւղ)  
Կիլիկեան որբախնամ Տիկնանց Ընկերութիւն (Մամաթիոյ)  
Մինաս Էժ. Մինասեան (Պրուսա)

Միրիմ Էֆ. Թօգաքնան  
Մարտիրոս Էֆ. Մալհասլեան (Մահալլըս)  
Յարուբին Էֆ. Վարդեան (Կիրասոն)  
Առնուլ Էֆ. Առնուլեան  
Տիգրան Խան Քէլէկեան (Բարիզ)

\* Տիկնայի Ա. Սելեան, Գ. Գայրաննեան, Եղիսա Կիւմիւս  
եան, Լ. Կիւտիկեան Կ. Հայրամեան, Հայկունի Նորատունկ-  
եան, Ս. Մահաքնեան, Ս. Մանուկեան, Ս. Միրզակեանց,  
Վարդունի Թիւրապեան, Տ. Արապեան, Թ. Զէչէեան և. Թէ-  
քէեան:

Այս բարեսէր Տիկնները ստանձնած են մէկ որբունիի համար  
12 ոսկի տարեթոշակ վճարել մինչև ուսման շրջանը աւարտելը:





0093

«Ազգային գրադարան

17283



NL0049995

